

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ԷԿՈՆՈՄԻԿԱՅԻ ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅԱՆ
ՄՏԱՎՈՐ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅԱՆ ԳՈՐԾԱԿԱԼՈՒԹՅԱՆ
ԲՈՂՈՔԱՐԿՄԱՆ ԽՈՐՀՐԴԻ
Ո Ր Ո Շ ՈՒ Մ
N 18/12

Քաղ. Երեւան

26 հոկտեմբերի 2012թ.

Հայաստանի Հանրապետության էկոնոմիկայի նախարարության մտավոր սեփականության գործակալության բողոքարկման խորհուրդը (այսուհետ՝ նաեւ բողոքարկման խորհուրդ) հետեւյալ կազմով՝ խորհրդի նախագահ Ա.Ֆ.Ազիզյան, անդամներ՝ Ա.Ս.Խաչիկյան, Ա. Վ. Բաբայան, Ա.Հ. Աբգարյան, Ա.Գ. Շահինյան և Ա. Ի.Ղարիբջանյան (քարտուղար) իր 2012թ. հոկտեմբերի 26-ի նիստում (արձանագրություն N 7.1) քննարկեց «Օրինո Քորփորեյշն» ընկերության ներկայացուցիչ Զ. Մանուկյանի կողմից 2012թ. սեպտեմբերի 9-ին ներկայացված «MARINE BOY» (հայտի համարը 20111490) բառային ապրանքային նշանի գրանցումը մերժելու մասին կրկնական փորձաքննության որոշման դեմ բողոքը:

Մերժման հիմք են հանդիսացել «Ապրանքային նշանների մասին» ՀՀ օրենքի 10-րդ հոդվածի 1-ին մասի 7-րդ կետը, ՀՀ օրենքի 9-րդ հոդվածի 1-ին մասի 7-րդ կետը, «Ապրանքային նշանների հայտերը լրացնելու, ներկայացնելու և քննարկելու մասին» կարգի (ՀՀ կառավարության 2010թ. նոյեմբերի 18-ի 1538-Ն որոշում) 107-րդ կետի 12-րդ մասը, համաձայն որոնց որպես ապրանքային նշան գրանցման ենթակա չէ այն նիշը, որը վերարտադրում կամ ներառում է հեղինակային իրավունքով պահպանվող գրականության, գիտության, կամ արվեստի ստեղծագործություններ, դրանց անվանումներ կամ դրանցից մեջբերումներ ու հատվածներ, դրանց հերոսներ, եթե այդ իրավունքները ձեռք են բերվել մինչև տվյալ ապրանքային նշանի հայտի ներկայացման կամ առաջնության թվականը: Ապրանքային նշանը չի գրանցվել, քանի որ այն վերարտադրում է է 1966-1967թթ ճապոնիայում «JAPAN TELE-CARTOONS»-ի կողմից արտադրված «MARINE BOY» մուլտֆիլմի անվանումը:

Բողոքարկողը համաձայն չէ փորձաքննության որոշման հետ և իր բողոքում բերել է ստորև նշված փաստարկները:

Բողոքում նշված է, որ մուլտիմեդիայի գերարագ զարգացող ոլորտներից է, ինչպես քանակական աճի, այնպես էլ տեխնիկական միջոցների անընդհատ կատարելագործման շնորհիվ: Այս պատճառով վեջինիս արտադրանքը հակում ունի չափազանց արագընթաց հնացման, ինչի հետևանքով ընդամենը մի քանի տարի առաջ թողարկված մուլտֆիլմներն արդեն դուրս են մղվել շրջանառությունից, չեն ցուցադրվում և հանրությանն այլևս ծանոթ չեն լինում:

Տվյալ դեպքում խոսքը գնում է ոչ թե մի քանի տարվա, այլ գրեթե կեսդարյա հնության մուլտֆիլմի մասին, որն արտադրվել և ի սկզբանե ցուցադրվել է ճապոնիայում: Բողոքարկողը գտնում է, որ դա եւս կարևոր փաստ է համարվում, քանի որ եթե նշված մուլտֆիլմը Խորհրդային տարածքի որևէ երկրի արտադրանք հասդիսանար, ապա Հայաստանում ևս՝ որպես Խորհրդային Միության մասնիկ երկրում, կունենար որոշակի ճանաչում: Տվյալ ժամանակաշրջանում և մինչ իննսունական թվականների վերջը Սովետական Միությունում արտասահմանյան մուլտֆիլմներ գրեթե չէին ցուցադրվում: Այս առնչությամբ, բողոքարկողը ավելորդ չի համարում նշել, որ իրեն շրջապատող մարդկանց ոչ այդքան փոքր շրջանակում չգտնվեց նույնիսկ մեկ մարդ, ում թեկուզ և ծանոթ լիներ այս մուլտֆիլմի անվանումը: Ի դեպ ավելորդ չէ նաև նշել, որ 1966-1967 թթ. ճապոնիայում «JAPAN TELE-CARTOONS» կողմից արտադրված «MARINE BOY» մուլտֆիլմը կրել է «DOLPHIN BOY» անվանումը: «MARINE BOY» այն արդեն կոչվել է ավելի ուշ, ԱՄՆ-ում ցուցադրվելու համար:

Նշված է նաև, որ «ORION» ընկերությունը, որն աշխարհում առաջատարներից է քաղցրավենիքի շուկայում և «MARINE BOY» ապրանքային նշանի համար անարգել ազգային գրանցումներ է ձեռք բերել Ռուսաստանում, Լատվիայում, Լիտվայում, Իսպանիայում, Միացյալ Թագավորությունում, Գերմանիայում, Սինգապուրում, Ֆիլիպիններում, Մեկսիկայում, Ֆրանսիայում, Լատսում, Կոմբոջայում, Վիետնամում: Ընդ որում, «MARINE BOY» ապրանքային նշանով մականշված նրա արտադրանքը, ներկայացված է չափազանց լայն տեսականիով և արդեն այնքան լայն ճանաչում է ստացել, որ օրինակ google համաշխարհային որոնողական ցանցում «MARINE BOY» բառակապակցությամբ որոնում կատարելիս արդյունքների ցանկում առաջին նշումը marineboy.ru կայքն է, որը պատկանում է orion ընկերությանը՝ համանուն արտադրանքի և դրան վերաբերող խաղերի ու լրացուցիչ նյութերի համակողմանի նյութով հագեցած, ցանկում հաջորդ արդյունքը ևս վերաբերում է orion ընկերության «ծովային բրենդի» թխվածքաբլիթներին, իսկ նույն նշամբ որոնում կատարելիս նույն google-ի նկարների պաշարում ստանում ենք վերոնշյալ «MARINE BOY» մուլտֆիլմի նկարների շարք, ինչպես նաև «Orion» ընկերության նշված արտադրանքի արտաքին փաթեթավորման նկարներ:

Ամփոփելով իր բողոքը՝ բողոքարկողը խնդրում է վերանայել բաժնի որոշումը և գրանցել հայտ N 20111490 «MARINE BOY» ապրանքային նշանը Հայաստանի Հանրապետությունում:

Կոլեգիայի անդամը՝ բողոքը ներկայացնելիս նշեց, որ 2012թ. սեպտեմբերի 6-ին «ORION» ընկերության կողմից ներկայացվել է 30-րդ դասի ապրանքների համար (հայտի համարը N 20111490) բառային ապրանքային նշանի գրանցումը մերժելու մասին կրկնական փորձաքննության դեմ բողոք: Համառոտ ներկայացվեց ապրանքային նշանի գրանցումը մերժելու մասին հիմքերը, ինչպես նաև բողոքի համառոտ բովանդակությունը:

Կոլեգիայի անդամի կողմից նշվեց բողոքից դրվագներ, մասնավորապես այն մասին, որ 1966-1967 թթ. ճապոնիայում «JAPAN TELE-CARTOONS»-ի կողմից արտադրված «MARINE BOY» մուլտֆիլմը կրել է «DOLPHIN BOY» անվանումը, իսկ ավելի ուշ վերանվանվել է «MARINE BOY»-ի և նույնիսկ ճապոնիայում դուրս է եկել կիրառությունից: Նշվեց նաև, որ ապրանքային նշանը գրանցվել է Ռուսաստանում, Լատվիայում, Լիտվայում, Իսպանիայում, Միացյալ Թագավորությունում, Գերմանիայում, Սինգապուրում, Ֆիլիպիններում, Մեկսիկայում, Ֆրանսիայում, Լատսում, Կոմբոջայում և Վիետնամում:

Նշվեց նաև, որ ֆիլմը Խորհրդային Միության տարածքի որևէ երկրում, ինչպես նաև Հայաստանում լայն տարածում չի ունեցել, իսկ հիմա նույնիսկ ճապոնիայում դուրս է եկել կիրառությունից:

«MARINE BOY» ապրանքային նշանը մերժվել է, հիմք ընդունելով, որ այն վերարտադրում կամ ներառում է հեղինակային իրավունքով պահպանվող գրականության, գիտության, կամ արվեստի ստեղծագործություններ և դրանց անվանումներ կամ դրանցից մեջբերումներ ու հատվածներ, իսկ համաձայն «Հեղինակային իրավունքի և հարակից իրավունքների մասին» ՀՀ օրենքի 3-րդ հոդվածի՝ հեղինակային իրավունքի օբյեկտ է համարվում գրականության, գիտության և արվեստի բնագավառներում հեղինակի ինքնուրույն կամ այլ հեղինակների հետ իրականացրած ստեղծագործական աշխատանքի յուրօրինակ արդյունքը և կարող են օգտագործվել ինքնուրույն: Տվյալ դեպքում «MARINE BOY»-ը չի համարվում այդպիսի յուրօրինակ արդյունք և չի կարող օգտագործվել ինքնուրույն:

Բողոքարկման խորհուրդը, ընդանուր վերլուծության արդյունքում, եկավ այն եզրակացության, որ բողոքարկողի փաստարկները համոզիչ են «MARINE BOY» ապրանքային նշանը կարելի է գրանցել:

«Ընդհանուր քննարկման արդյունքում, ղեկավարվելով «Հայաստանի Հանրապետության էկոնոմիկայի նախարարության մտավոր սեփականության գործակալության բողոքարկման խորհուրդ բողոքների եւ դիմումների ներկայացման եւ քննարկման կարգի» 68-րդ կետի 1-ին ենթակետով բողոքարկման խորհուրդը

Ո Ր Ո Շ Ե Ց

Բողոքը ամբողջությամբ բավարարել, ապրանքային նշանի նախնական մերժման մասին Գործակալության 23.03.2012թ. և կրկնական փորձաքննության՝ 01.06.2012թ. որոշումները չեղյալ ճանաչել և գրանցել ընկերության «Orion» «MARINE BOY» (հայտի համարը 20111490) բառային ապրանքային նշանը հայտարկված ապրանքների համար:

Բողոքարկման խորհրդի

նախագահ

Ա. Ազիզյան